

Գաւիթ էսաց.—Չէ, տիւ չըս կերը ճաշ պիրը, իս կ'երթամ:
տիւ տաւար պախը, իս էրթամ, առնիմ, պիրիմ:

Գաւիթ էլաւ, կինաց էն գեղ. խասաւ, տեսաւ, որ քեան-
տուն լիւկ¹⁾ խրիսայ²⁾ ի դրած, էսաց.—Ա՛յ ջանմ, քիչ ըմ խարի-
սայ տուէք տանիմ, իս իմ ընկիր ուտինք:

Թամխար կանգընաւ, էսաց.—Ա՛յ որտի, դեադը՝ պատա-
րագ ընը, համ կուշտ կի, համ առ, տար:

Էսաց.—Չէ, իս լաղն³⁾ իմ, մկայ կ'տանիմ,—նախիր կ'երթայ
խալխի զիանքտիր:

Որ շ'տուին, Գաւիթ էզար մէկ լիւկ խրիսայ էխան, մէկ
պղինձ էլ եղ, առից, կինաց նախընու մօտ, տեսաւ նախընին էն-
դեղ կ'լայ, էսաց.—Չանմ, ինչք⁴⁾ կ'լաս:

Էսաց.—Վ'լամ, էսաց, տաս դիւ⁴⁾ էկան, տաս խատ իլ իմ տա-
ւարքիրուց առին, տարան:

Էսաց.—Հայդի, թըղ հրիսէն մնայ էստեղ, ես էրթամ տա-
ւարնիր առնիմ, պիրիմ, նուր կ'ուտինք:

Էդիկ մնաց. ինք էլաւ յիտիւ դիւիրուն կինաց. կինաց, էլաւ
սարի գլեոխ. տեսաւ՝ դիւիր զտաս իլ զինած, կտրտած, լցած
մեանչ տաս կանթէն պղինձ կ'իփին: Էն սհաթին խասաւ, տաս դի-
ւու գլեոխ կտրից, էլաւ ձեռ էտու զպղինձ՝ միս մէջ հալայ կե-
սափիւր, առից, վիրուց, տարաւ էն գեղը մէջ՝ կաշիքն էլ խիտ.—
Առէք, էսաց, էսա մեծ պղինձ ձի պտտիկ պղնձի փուխ⁵⁾, էսա միսն
էլ ձի խրիսը փուխ, ինչ իս տարիր իմ, կաշիքն էլ շիւարնիր թըխ
խագնին իմ խերը խամար:

Գարծաւ, էկաւ մատ նախըրուրդ, տեսաւ, որ խրօխպէր խաց
առիր, իկիր ի:

Խրօխպէր որ զատնու իրիշկից մեանչ նախրին, վախացաւ. տե-
սաւ որ քեանի արջ ըմ կայ, կէլ ըմ կայ, ասլան կայ, կափլան

¹⁾ Փոքրիկ կարաս: ²⁾ Հարիսայ: ³⁾ Առագ, շտապ: ⁴⁾ Դև:
⁵⁾ Փոխ, փոխարէն: